«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» մայիսի 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

Ն ԳԲԽ 14/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 05.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 05.05.2014թ. ներկայացված բողոքով «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից 28.04.2014թ. կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4

ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի վերաբերյալ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն չի ծանուցվել և չի կարողացել մասնակցել այդ ընթացակարգին:

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն խախտել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետը, համաձայն որի՝ գնումների կամ նախաորակավորման հայտարարության և (կամ) հրավերի տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով գնման ընթացակարգը:

2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.05.2014թ. N 011/032-802 գրությամբ դիմել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 05.05.2014թ. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 08.05.2014թ. N 01-14/1931 գրությամբ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 2014թ. ապրիլի 15-ին հայտարարել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Մրցույթի հրավեր-ծանուցումը 2014թ. ապրիլի 15-ին ուղարկվել է apranq-11-4@shh.gnumner.am էլեկտրոնային փոստին: Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել ապրիլի 28-ին, ժամը 12:00-ին, որին մասնակցել են 2 դեղագործական ընկերություն:

Միաժամանակ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն Կենտրոնին է ներկայացրել 15.04.2014թ. tender@sglmc.am էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված հրավերի (ծանուցման) քաղվածքը:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 15.05.2014թ. N 01-14/2030 գրությամբ դիմել է Գնումների աջակցման կենտրոնին և հայտնել, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից 15.04.2014թ. հայտարարված «ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտարարվել է չկայացած՝ կից ներկայացնելով՝ «ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

3. ԳԲԽ-14/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-14/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն»ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 05.05.2014թ. ներկայացված բողոքը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին 08.05.2014թ. և 15.05.2014թ. ներկայացրած համապատասխանաբար NN 01-14/1931 և N 01-14/2030 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որի վերաբերյալ Պատվիրատուն սահմանված կարգով չի ծանուցել «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ին, ինչի արդյունքում վերջինս զրկված է եղել Ընթացակարգին մասնակցելու իր հնարավորությունից:

Բողոքաբերը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի 2-

րդ ենթակետով սահմանված պահանջները՝ խնդրելով անվավեր ճանաչել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով ընթացակարգը:

Պատվիրատուն 08.05.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 01-14/1931 գրությամբ հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Ընթացակարգի հրավեր-ծանուցումը 2014թ. ապրիլի 15-ին ուղարկվել է apranq-11-4@shh.gnumner.am էլեկտրոնային փոստին: Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել ապրիլի 28-ին ժամը 12:00-ին, որին մասնակցել են 2 դեղագործական ընկերություն:

Պատվիրատուի կողմից Կենտրոնին է ներկայացվել 15.04.2014թ. tender@sglmc.am էլեկտրոնային փոստի հասցեից aprang-11-4@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակի քաղվածքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Գնումների աջակցման կենտրոնն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

Կենտրոնում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ apranq-11-4@shh.gnumner.am ավտոմատ ծանուցման համակարգում Գնումների աջակցման կենտրոնի grancum1@armeps.am տեստային էլեկտրոնային փոստի հասցեին 15.04.2014թ.-ին tender@sglmc.am էլեկտրոնային հասցեից հրավեր (ծանուցում) չի ստացվել:

«Դեղորայքի և պատվաստանյութերի» ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի ավտոմատ ծանուցման էլեկտրոնային հասցեն է՝ apranq-11-4@shh.gnumner.am, մինչդեռ Պատվիրատուն 15.04.2014թ. tender@sglmc.am էլեկտրոնային փոստի հասցեից հրավերն (ծանուցումը) ուղարկել է aprang-11-4@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ «apranq» բառի փոխարեն նշելով «aprang» բառը:

Այսինքն, Պատվիրատուն նշելով սխալ էլեկտրոնային հասցե, հրավերը միաժամանակյա ծանուցմամբ չի ուղարկել շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին:

Օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Գնումների աջակցման կենտրոնը գնահատում է մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կնքում է շրջանակային համաձայնագրեր, կազմում և տեղեկագրում հրապարակում է շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների ցուցակը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

Հրավերի 1-ին մասի 6.1 ենթակետի համաձայն՝ նույն ընթացակարգի շրջանակներում գնում կատարելու նպատակով պատվիրատուն շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր անձանց միաժամանակ ծանուցում է հայտ ներկայացնելու մասին՝ կցելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Այսպիսով, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետով և Հրավերի 1-ին մասի 6.1 ենթակետով սահմանված պահանջները, որի արդյունքում բողոքաբեր կազմակերպությունը զրկվել է Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից:

Բացի այդ, Պատվիրատուն 15.05.2014թ. N 01-14/2030 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից 15.04.2014թ. հայտարարված «ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 12-ի թիվ 3 որոշմամբ հայտարարվել է չկայացած՝ կից ներկայացնելով Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 05.05.2014թ. բողոքով Կենտրոնին ներկայացված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ՍԳԼ-ԱՊՁԲ-14/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգն անվավեր ճանաչելու մասին պահանջը բողոքի քննության ընթացքում դարձել է

առարկայազուրկ, քանի որ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելը Պատվիրատուն կայացրել է որոշում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, ուստի առաջարկում ենք բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ — Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ — Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-14/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար — Ա. Գրիգորյան